ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՌՈՏՆԿԱՐԱԳԻՐԸ

ՏԱՐԱԾՔԸ (ՀՀ տարածքի 15.1%-ը) ..... 4506 քառ.կմ
ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ (ՀՀ բնակչ. 4.7%) ..... 135,8 հազ. մարդ
որից՝ քաղաքային.....89,9 հազար մարդ
գյուղական ..... 45.9 հազար մարդ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ ..... 30,1 մարդ/կմ.ք.
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԹԻՎԸ 7
Որից բացառապես գյուղական բնակավայրեր ընդգրկող համայնքներ 2
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԹԻՎԸ 139
Որից սահմանամերձ, լեռնային բարձր լեռնային 108
ՍԱՀՄԱՆԻ ԵՐԿԱՐՈՒԹՅՈՒՆԸ 472կմ
Իրանի Իսլամական Հանրապետության հետ ..... 42 կմ
Ադրբեջանի Հանրապետության հետ 382կմ
(որից 110 կմ՝ Նախիջևանի ԻՀ-ի հետ)
ՄԱՐԶԿԵՆՏՐՈՆԸ ..... ք. Կապան

Սյունիքի մարզը, 2016-2017թթ. խոշորացման գործընթացի արդյունքում, ընդգրկում է 8 համայնք, որից 5-ը ներառում է և քաղաքային, և գյուղական բնակավայր, 3-ը՝ միայն գյուղական: 2022 թվականին Սիսիան և Գորայք համայնքների միավորման արդյունքում համայնքների թիվը պակասել է մեկով:

Մարզում բազմաճյուղ տնտեսության կազմակերպման և զարգացման համար առկա են անհրաժեշտ նախապայմաններ:

Մարզպետարանի գործունեության կազմակերպման ընդհանուր հարցեր

Մարզպետի աշխատակազմի 2022թ. գործունեության համար հստակեցվել էին մարզի զարգացման հիմնական ռազմավարություններն ու ուղղությունները, մարզում առկա և առաջնահերթ լուծում պահանջող սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները՝ 44-օրյա պատերազմից և ՀՀ-ի ինքնիշխան տարածք ադրբեջանական զինուժի սեպտեմբերյան ներխուժումից հետո ստեղծված նոր իրողություններով: Առանձին հիմնախնդիրների լուծման համար մշակվել են անհրաժեշտ միջոցառումների ծրագրեր, դրանք ներառվել մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքային ծրագրերում:

Սահմանված կարգով կազմակերպվել է մարզային ենթակայության 132 կազմակերպությունների գործունեությունը, համակարգվել հանրապետական գործադիր մարմինների ավելի քան 51 տարածքային ծառայությունների աշխատանքը:

Համայնքների, հանրապետական գործադիր մարմինների, մարզային ենթակայության կազմակերպությունների և մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների հետ անցկացվել 18 խորհրդակցություն, որից 3-ը՝արտագնա: Մի շարք օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված՝ կայացել է մարզի խորհրդի ընդամենը 2 նիստ: Մարզի խորհրդի նիստում, խորհրդակցություններում քննարկվել են մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական իրավիճակի, կրթության, մշակույթի, առողջապահության

և սոցիալական ապահովության խնդիրներին առնչվող, ինչպես նաև քաղաքաշինության, գյուղատնտեսության և հողօգտագործման, սուբվենցիոն տարբեր ծրագրերի իրագործման ընթացքի, զորակոչի կազմակերպման, ռազմական գործողությունների հետևանքների հաղթահարման հետ կապված և այլ հարցեր:

Մարզի համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացումն ապահովելու նպատակով համայնքների կողմից 2022 թվականին ներկայացված և հավանության արժանացած 28 սուբվենցիոն ծրագրերի նախահաշվային արժեքը կազմել է 7,7 մլրդ ՀՀ դրամ:

2023 թվականի համար մարզի համայնքներից ներկայացվել թվով 24 սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթ, շուրջ 5.9 մլրդ ՀՀ դրամի նախահաշվային արժեքով:

Սուբվենցիոն ծրագրերի ամբողջական փաթեթներ չեն ներկայացվել Գորայք և Սիսիան համայնքներից:

Մարզպետարանի կարևորագույն խնդիրներից է եղել փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանն աջակցելը և դրա համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, հաշվի առնելով, որ փոքր և միջին ձեռնարկությունները հիմնականում օգտագործում են տեղական ռեսուրսներ, չեն պահանջում խոշոր ներդրումներ և աշխատատեղեր են ապահովում համեմատաբար կարճ ժամանակահատվածում:

Սյունիքի մարզպետարանը շարունակել է աշխատանքները գործընկեր կառույցների հետ, ինչպես նաև մշակվել և գործարկվել է արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների նոր մոդել:

2022թ. ընթացքում ուսումնասիրվել է մարզի համայնքներից ստացված ավագանիների նիստերում ընդունված 644 որոշում, որից՝ 594-ը՝ անհատական, 48-ը՝ նորմատիվ, 2 լոկալ; Դրանց՝ ՀՀ օրենսդրության համապատասխանության մասին կազմվել է 71 եզրակացություն: Ուսումնասիրվել է մարզի համայնքերի կողմից ընդունվածև մարզպետարան առաքված թվով 5212 որոշում:

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների համար իրականացվել է 4 մրցույթ և դրանց արդյունքում համապատասխան պաշտոններում կատարվել նշանակումներ: Կնքվել է 4 աշխատանքային պայմանագիր: Սահմանված կարգով առկա և հեռավար կարգով վերապատրաստում են անցել 10 քաղաքացիական ծառայող:

2022թ. ընդունվել է մարզպետի 537 որոշում, առաքվել է 9300 փաստաթուղթ, մարզպետարան մուտքագրվել՝ 14246 թղթակցություն:

2022թ. ընթացքում կատարվել է 135 քաղաքացիների ընդունելություն: Մարզպետի մոտ ընդունելության համար հերթագրված և ընդունելությանը մասնակցած քաղաքացիների վերաբերյալ տեղեկատվությունը պարբերաբար տեղադրվում է մարզպետարանի պաշտոնական կայքում:

Տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարմանև հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեությանն առնչվող հարցեր

2022 թվականին մարզի 4 համայնքներում իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ՝ համաձայն հաստատված աշխատանքային ծրագրի:

2022 թվականին մարզպետը, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում ապահովել է Սյունիքի մարզի նոր խոշորացված Սիսիան

բազմաբնակավայր համայնքում կայացած համայնքի ավագանու՝ համամասնական ընտրակարգով ընտրության հետ կապված գործառույթների իրականացումը:

Մեթոդական և խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի համայնքապետարանների աշխատակազմերին՝ իրենց լիազորությունների իրականացման հետ կապված հարցերով:

Ապահովվել է ՀՈԱԿ-ների տնօրենների, ինչպես նաև համայնքային ծառայության թափուր պաշտոններ համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը:

2022 թվականի ընթացքում համայնքային ծառայության թափուր պաշտոնների համալրման նպատակով կայացել է 69 մրցույթ, ատեստավորվել է 51, վերապատրաստվել՝ 52 համայնքային ծառայող:

ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման ակադեմիայում վերապատրաստվել են մարզպետի աշխատակազմի, տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների 94 աշխատակիցներ, կազմվել է 2023 թվականի վերապատրաստումների պլան-ժամանակացույցը:

Մարզի բոլոր համայնքներն ապահովված են համակարգչային տեխնիկայով և համացանցային կապով, էլեկտրոնային փոստարկղներով, համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերով, ունեն համացանցային պաշտոնական կայքեր:

Մարզպետարանի կայքում պարբերաբար հրապարակվել են նաև համայնքների ավագանիների կողմից ընդունված և 2022 թվականի ընթացքում մարզպետարան առաքված որոշումները, ՀՈԱԿ-ների տնօրենների և համայնքային ծառայության թափուր պաշտոնների համար մրցույթների մասին հայտարարությունները և համայնքներին վերաբերող այլ տեղեկատվություն:

Սահմանված ժամկետներում ուսումնասիրվել, մշակվել և ընթացք են տրվել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային առաջադրանքների հետ կապված փաստաթղթերին, անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել պահեստազորայինների եռամսյա վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին: Մարզում զինապարտների մասնակցության և ավտոտրանսպորտային միջոցների հավաքագրման մասով ամբողջությամբ կատարվել է 2022 թվականին անցկացված եռամսյա վարժական հավաքների կազմակերպման առաջադրանքը:

Մարզպետը, որպես մարզի զորակոչային հանձնաժողովի նախագահ, իր իրավասության շրջանակներում օժանդակություն է ցույց տվել մարզի ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանմանը՝ զորակոչերի նախապատրաստման և անցկացված ուսումնավարժանքների կազմակերպման ժամանակ:

Մարզային զորակոչային հանձնաժողովի կողմից 78 քաղաքացու վերաբերյալ եզրակացություն է տրվել շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու մասին:

Կատարվել են ամառային զորակոչի պլանային առաջադրանքները (103,6%), իսկ ձմեռային զորակոչն ընթացքի մեջ է:

Սերտ համագործակցություն է հաստատվել ՀՀ Սյունիքի մարզպետարանի և ՀՀՊՆ, ՀՀ ԱԱԾ սահմանապահզորքերի և ՌԴՊՆ՝ մարզի տարածքում տեղակայված զորամասերի միջև:

Մարզպետի 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N541-Ա որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի

նախապատրաստման 2022 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ը, որն ամբողջությամբ կատարվել է:

2022թ.-ի հաշվետու ժամանակահատվածում Կապան համայնքի 11 գյուղերում անց է կացվել շտաբային ուսումնավարժություններ <<Բնակչության տարահանման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը խոշոր անտառային հրդեհների դեպքում>> թեմայով:

ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ Սյունիքի մարզի թվով 19 դպրոցներում անց է կացվել հատուկ տակտիկական ուսումնավարժություններ և դասախոսություններ <<Տարահանման և պատսպարման կազմակերպումը հակառակորդի օդուժի ռմբակոծության դեպքում>> թեմայով: Մարտի 23-30-ը Սյունիքի ՄՓՎ ստորաբաժանումների կողմից հատուկ կարևորագույն օբյեկտներում անց է կացվել հատուկ տակտիկական ուսումնավարժություններ:

Մարզային ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ անց է կացվել հրամանատարական պատրաստության պարապմունքներ:

2022 թվականի ընթացքում մարզում գրանցվել են 880 արտակարգ դեպքեր, որոնցից՝ 689-ը՝տեխ¬նածին, 191-ը՝տարերային:

Մարզում առկա է 146 հատ շչակ և 1 հատ բարձրախոս, որից սարքին է 121 շչակ և 1 հատ բարձրախոս, միասնական համակարգով մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնին է միացված 29 շչակ:

Ընդհանուր թվով մարզում առկա են փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների համար քաղաքացիական պաշտպանության 595 կազմավորումներ՝ 2892 մարդ անձնակազմով և 1201 տրանսպորտային միջոցներ ու 796 ինժեներական տեխնիկա:

Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ՔՊ ինժեներական ծառայությունների հետ համատեղ ուսումնասիրվել են բնակչության պատսպարման թաքստոցների վիճակը՝ բնակչության պատսպարման կազմակերպման հնարավորության տեսանկյունից:

Կազմվել են 2020 թվականի 44-օրյա պատերազմի, 2022 թվականի սեպտեմբերի 13-ի ագրեսիայի ընթացքում զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասի դիմաց հատուցում ստանալու համար մարզի 10 զոհված, 7 վիրավոր և 6 անհետ կորած զինծառայողների գործերը և ներկայացվել պաշտպանության նախարարություն:

Մարզպետի աշխատակազմում վարվում է Արցախից տեղահանված և մարզում ժամանակավոր բնակվող Արցախի Հանարապետության քաղաքացիների տեղեկատվական բազան: Մարզում 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ բնակվում են Արցախից տեղափոխված 992 ընտանիքներ կամ 3697 մարդ:

Սոցիալական աջակցություն է ցուցաբերվել մարզի Կապան, Տեղ և Գորիս համայնքների՝ 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ հրետակոծությունից անկած, հայ-ադրբեջանական շփման գիծն անցած և 2022 թվականի սեպտեմբերի 12-14-ը Ադրբեջանի ագրեսիայի ժամանակ հակառակորդի տիրապետության տակ անցած գյուղատնտեսական կենդանիների կորուստ ունեցած բնակիչներին:

Կազմվել է մարզի Շուռնուխ և Որոտան բնակավայրերում գտնվող և Ադրբեջանի վերահսկողության տակ անցած բնակելի անշարժ գույքի հասցեում հաշվառված կամ այդ հասցեում փաստացի բնակված քաղաքացիներին օժանդակելու համար ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 112-Լ որոշմամբ հաստատված

միջոցառման շահառուների ցանկը և ներկայացվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

Աշխատանքներ են տարվել աշխարհազորի պատրաստության աջակցման ուղղությամբ, մասնավորապես՝ սահմանամերձ 3 բնակավայրերի աշխարհազորային կազմավորումներն ապահովվել են կեցավայրերի կազմակերպման համար անհրաժեշտ կենցաղային պարագաներով և հանդերձանքով:

Միջոցներ են ձեռնարկվում սահմանամերձ մյուս բնակավայրերի՝ տեղակայվելիք աշխարհազորայիններին նմանատիպ օժանդակություն ցուցաբերելու ուղղությամբ:

Մարզում կառավարության տարածքային քաղաքականության իրականացումն ըստ բնագավառների

❖ Ֆինանսական բնագավառ

2022 թվականի ընթացքում ՀՀ պետական բյուջեից մարզին հատկացված միջոցների ֆինանսավորումը կազմել է 99.49%:

Առողջապահության բնագավառում հիվանդանոցային, շտապ օգնության, ամբուլատոր-պոլիկլինիկական և նեղ մասնագիտական /հոգեբուժական/ դիսպանսերային ծրագրերով նախատեսված ծառայությունների բազային ծավալը 2022թ. կազմել է 2.4 մլրդ դրամ, որն առողջապահության գործակալության կողմից ընդունվել և փոխհատուցվել է 2,5 մլրդ. դրամ:

ՀՀ պետական բյուջեով 2022թ. մարզի 8 համայնքներին նախատեսված 5.0 մլրդ դրամ դոտացիաները հատկացվել են ամբողջությամբ:

Համայնքների բյուջեները ընդհանուր եկամուտների մասով կատարվել են 70.5 %, իսկ սեփական եկամուտները ապառքներով՝ 101.3%: Բնակչության մեկ շնչի հաշվարկով համայնքների սեփական եկամուտները կազմում է 22.3 հազ.դրամ:

Փաստացի հավաքագրված սեփական եկամուտների 3.0 մլրդ դրամ ընդհանուր ծավալում անշարժ գույքի տեսակարար կշիռը կազմում է 7,5%, գույքահարկինը՝ 24,2%, վարձակալությամբ տրված գույքի վարձավճարներինը՝ 36.3%:

Կազմվել և գլխադասային մարմիններին են ներկայացվել 2023-2025թթ. պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերի և 2023թ. բյուջետային ֆինանսավորման հայտերը:

Մարզպետի աշխատակազմի կարիքների համար 2022թ. կազմակերպվել է 65 գնման ընթացակարգ, որոնց արդյունքում կնքված 164 պայմանագրերը հաշվառվել են ֆինանսների նախարարության կողմից: Ընդհանուր առմամբ խնայվել է 228.7 հազ. դրամ:

2022թ. պետական բյուջեով հաստատված մարզպետի աշխատակազմի պահպանման ծախսերի գումարից խնայվել է ավելի քան 4,5 մլն դրամ, որն ամբողջությամբ վերադարձվել է պետբյուջե:

❖ Արդյունաբերության բնագավառ

Մարզի տնտեսության առանցքային ճյուղը արդյունաբերությունն է:

Մարզի արդյունաբերական ձեռնարկություններում թողարկված արտադրանքի ծավալը 2022 թվականին՝ նախնական տվյալներով, ընթացիկ գներով կկազմի շուրջ 535 մլրդ դրամ, որը նախորդ տարվա նկատմամբ փոփոխության չի ենթարկվի: Իրացվել է՝ նախնական տվյալներով, ավելի քան 519 մլրդ դրամի պատրաստի արտադրանք:

Արդյունաբերական արտադրանքի ծավալում գերակշիռ մաս է կազմում հանքագործական արդյունաբերական արտադրանքը՝ նախնական տվյալներով (ընթացիկ գներով) մոտ 443.6 մլրդ դրամ, կամ ընդհանուրի 85%-ը:

2022 թվականին հանրապետությունում թողարկված արդյունաբերական արտադրանքի մոտ 22%-ը բաժին է ընկել Սյունիքի մարզի արդյունաբերական կազմակերպություններին:

2022 թվականին մարզում արտադրված էլեկտրաէներգիայի ծավալը նախնական տվյալներով կազմել է 1.1 մլրդ. կվտ/ժամ:

❖ Քաղաքաշինության բնագավառ

Սահմանված կարգով կատարվել են զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները: 2022թ. ընթացքում ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բնակարանի գնման վկայագրեր չեն տրվել: 2022թ-ին բնակարանային պայմանների բարելավման նպատակով հաշվառման են վերցվել զոհվածի 7 և հաշմանդամ դարձածի 1 ընտանիք:

Տարվա ընթացքում գազասպառող են դարձել Մեղրի բնակավայրի 16 ընտանիք: Տարեսկզբի 26286-ի դիմաց բաժանորդների թիվը տարեվերջին հասել է 26477 կամ աճը կազմել է 0,7 %: Գազասպառող տնտեսվարողների թիվը 551-ից հասել է 579-ի, կամ աճը կազմել է 4,9%:

Տարվա ընթացքում սպառված գազի ծավալը կազմել է 57,2 մլն խոր.մ:

Համակարգված աշխատանքներ են տարվել աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման ուղղությամբ: 2022 թվականին գույքագրված 38 աղբավայրերերը շարունակել են նույնությամբ շահագործվել: Աղբանոցների վերացման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվել: Տնտեսվարող սուբյեկտների հետ կնքված պայմանագրերի թիվը 2022 թվականի ընթացքում 2234-ից հասցվել է 2241-ի: Աղբահանության ինքնածախսածածկման ուղղությամբ 2021 թվականի եկամուտ-ծախս հարաբերակցությունը կազմել է 70%.

2022թ-ին աղբահանություն իրականացվել է մարզի 68 բնակավայրերում, նախատեսված 63-ի փոխարեն:

Աղբահանության վճարների հավաքագրումը կազմել է 351,9 մլն դրամ, որից բնակչությունից 184,4 մլն դրամ, իրավաբանական անձանցից 167,5 մլն դրամ:

Աղբահանության ծառայությունների վրա կատարված ծախսերը կազմել են 506,8 մլն դրամ:

Սահմանված կարգով կատարվել են զոհված (մահացած) և հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները:

❖ Ճանապարհաշինության բնագավառ

Մարզի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տարբեր նշանակության ճանապարհային ցանցի երկարությունը, կազմում է 1014.75 կմ, այդ թվում միջպետական՝ 352.0 կմ, հանրապետական՝ 163.05 կմ և մարզային նշանակության 499.7 կմ:

Տարվա ընթացքում որոշակի աշխատանքներ են կատարվել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ճանապարհների հիմնանորոգման ու պահպանման ուղղությամբ:

ՀՀ պետական բյուջեով 2022 թվականի ընթացքում մարզի ճանապարհաշինարարական և այլ կազմակերպությունների կողմից ընդհանուր առմամբ իրականացվել է ավելի քան 4.77 մլրդ դրամ ընդհանուր գումարի աշխատանքներ, այդ թվում տարբեր նշանակության ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգման, միջին նորոգման համար՝ մոտ 3.7 մլրդ. դրամ, իսկ պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության համար 1099.7 մլն դրամ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին միջպետական, հանրապետական նշանակության ճանապարհների ձմեռային պահպանության, ընթացիկ պահպանման ու շահագործման համար կատարվել է 896.9 մլն.դրամի աշխատանքներ:

2021թ պետական բյուջեից միջպետական նշանակության ճանապարհների հիմնանորոգման համար հատկացված 25,71 մլրդ. դրամից իրականացվել և 2022թ ավարտվել են Մ-2, Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման կմ 196+000-կմ202+200 հատվածի հիմնանորոգում՝ ավելի քան 923,1 մլն. դրամի աշխատանքներ, Մ-13, /Մ-2/-Անգեղակոթ-Նախիջևանի սահման կմ0+000-կմ8+000 հատվածի հիմնանորոգում՝ 955,2 մլն դրամի աշխատանքներ, Տ-8-93, Լծեն-Տաթև տեղական նշանակության կմ0+000-կմ9+500 հատվածի վերակառուցում, Մ-17, /Մ-2/(Կապան)-Ծավ-/Մ-2/ ավտոճանապարհի Կապան-Ճակատեն շրջանցիկ ճանապարհահատվածի կառուցում Հ-46 (Քաշունի գյուղի խաչմերուկից)-Բարձրավան ավտոճանապարհի կառուցում, Հ-46 (Քաշունի գյուղի խաչմերուկից)-Բարձրավան ավտոճանապարհի կառուցում և այլն :

Արհեստական կառույցների պահպանության և շահագործման (Արաքս գետի Մեղրիի կամուրջ) և Մ-2 ճանապարհի նշագծման համար ծախսվել է 87,8 մլն դրամ:

Մարզպետարանի պատվիրատվությամբ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին մարզում իրականացվել են մարզային նշանակության ճանապարհների 260,0 կմ երկարությամբ՝ ձմեռային պահպանության և 114,9 կմ երկարությամբ՝ ընթացիկ պահպանման և շահագործման գծով՝ 202,821 մլն. դրամի աշխատանքներ:

❖ Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառ

Մարզի 43.9 հազ.հա վարելահողերից 2022թ. գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նպատակով գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների կողմից ցանքատարածությունների տակ է դրվել վարելահողերից բերքի տակ եղած ցանքային տարածությունները կազմել են 19.6 հազ.հա, որը կազմում է ընդհանուր վարելահողերի 47,5 %, անցած տարվա 20,8 հազ.հա–ի համեմատ 1.2 հազ.հա-ով պակաս:

«Սերմարտադրողների միություն» ՍՊԸ-ի (ՍԱՄ) միջոցով մարզի համայնքների տրվել է՝ աշնանացան ցորենի 50 տոննա էլիտա, 150 տոննա առաջին վերարտադրության սերմացու:

Տարվա ընթացքում «Մեղրիի տարածաշրջանի պտղաբուծության զարգացման» ՀԿ-ն «Բնապահպանության զարգացում» ծրագրի միջոցով իրականացվել է վաղահաս տնկիների (սալոր, կեռաս, թուզ, արքայանարինջ) ներդրում:

Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար ՀՀ կառավարության կողմից սուբսիդավորվել գարնանացան մշակաբույսերի (գարի, ցորեն, կորնգան, առվույտ, հատիկաընդեղեն՝ ոսպ, ոլոռ և սիսեռ) և թե՛ աշնանացան ցորենի սերմացուները: Կատարվել է 10892,8հա աշնանացան,3007,9հա գարնանացան հացահատիկային մշակաբույսերի ցանք:

Պետական աջակցության ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից մարզը 2022թ-ի գարնանը ձեռք է բերել 939,6 տ ազոտական պարարտանյութ:

Շարունակվել է ՀՀ կառավարության կողմից գյուղատնտեսական պետական օժանդակության ծրագրերի, սուբսիդավորված վարկերի տրամադրման, լիզինգային եղանակով գյուղտեխնիկայի և գյուղգործիքների ձեռքբերման գործընթացը:

ՄԱԿ–ի պարենի համաշխարհային ծրագրի միոցով մարզի 3 համայնքների 7 բնակավայրերում իրականացվել է ոռոգման ջրագծերի կառուցման աշխատանքներ, բացի դրանից Խնձորեսկում շարունակվում է հատիկաընդեղեն կուլտուրաների վերամշակման գործարանի կառուցման աշխատանքները: Կարմիր Խաչ միջազգային կազմակերպության, տարբեր ՀԿ–ների և հիմնադրամների կողմից մարզի համայնքներին և առանձին տնտեսվարողների տրամադրվել է գյուղտեխնիկա և գյուղսարքավորումներ, կաթիլային ոռոգման համակարգեր, մեղվափեթակներ, չրի ապարատներ, սառնարանային սարքավորումներ, սածիլներ, տնկիներ, անասնակեր, խոճկորներ:

ՀՖՀ –ի հիմնադրամի կողմից մարզի տնտեսվարողներին գարնանը տրվել է 110 000 պտղատու ծառատեսակներ, 1,2 մլն սածիլ, 25 ջերմոց:

2022 թվականի գարնանը կատարված մոնիթորինգի արդյունքում մարզի Սիսիան համայնքի՝ 5 և Տեղ համայնքի՝ 4 բնակավայրերի առավել վարակված 325հա գյուղատնտեսական նշանակության հողատեսքերում <Օկնոգինա> թրթուրների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից մարզին անհատույց տրամադրվել է 65 լ «Տրիումֆ» տեսակի միջատասպան թունանյութ, մարզպետարանի կողմից՝ 500լ դիզվառելիք: 2022թ. մարզի առավել վարակված 8297 հեկտար տարածության վրա մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով ձեռք է բերվել 663,74 լիտր «ԲրոմաԼադ» և «Բրոմոցիդ-Ֆլյուիդ» մկնասպան թունանյութեր:

2022թ. ընթացքում գյուղատնտեսական աշխատանքներում ներգրավված է եղել մարզում առկա գյուղտեխնիկայի 90%-ը:

2022թ. մարզի 9 բնակավայրերի համար կատարվել են ագրոքիմիական քարտեզների մշակման աշխատանքներ:

Մաքրվել են ոռոգման ներքին ցանցերը, բոլոր հայտ ներկայացրած գյուղացիական և ֆերմերային տնտեսություններին տրվել է անհրաժեշտ չափի ոռոգման ջուր: 2022թ. մարզում ոռոգվող հողատարածքը կազմել է 1396.1հա:

Պետպատվերի շրջանակներում իրականացվող պատվաստուկների և հակահամաճարակային այլ միջոցառումների համար ձեռք են բերվել անհրաժեշտ պարագաներ և անասնաբուժական ծառայության հետ համատեղ վերահսկվել և համակարգվել են գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի աշխատանքները: Տարիներ շարունակ մարզում խնդիր է անասնաբույժ կադրերի պակասը: Արդեն 5-րդ տարին է մարզի՝ Գորիս, Տեղ, Տաթև և Սիսիան համայնքներում չի լուծվել անասնաբույժների խնդիրը, որոշակի լուծում տալու համար անասնաբույժներին լրացուցիչ վճարումներ են կատարվել:

Տարվա ընթացքում զանգվածային հիվանդություններ չեն արձանագրվել:

Մարզում գործում է 5 տոհմային տնտեսություն՝ 600 գլխաքանակով: Տարվա ընթացքում կատարվել է 300 գլուխ խոշոր եղջերավոր անասունների (կովերի) արհեստական սերմնավորում:

Սահմանվել է առավել ուժեղացված հսկողություն մսամթերքների վաճառքի կետերում: Մարզում կա 55 մսի իրացման կետ (Կապան՝ 29, Մեղրի՝ 6, Գորիս՝ 10, Սիսիան՝ 11): Մարզում մսամթերքի վերավշակման արտադրությունը՝ 1հատ, <Մարիլա> ՍՊԸ:

Մսի վաճառքը թույլատրվում է միայն փորձաքննության արդյունքներից ելնելով: Այդ նպատակով մարզի բոլոր քաղաքներում բացվել են փորձաքննության լաբորատորիաներ: Աշխատանքներ են տարվում իսպառ վերացնելու մսի բակային, փողոցային վաճառքը: Մարզում գործում է 5 սպանդանոց, ևս 6-ը գտնվում են շինարարության փուլում: Սպանդանոցների շահագործումից հետո այս խնդիրը իսպառ կվերանա:

2022 թվականի տվյալ ժամանակահատվածում <<ՌԶԳ>>-ի գլխավորությամբ շարունակել ենք նախրաքարշի դաշտային ճանապարհների կայացման աշխատանքները:

Արցախյան պատերազմի հետևանքով մարզի գյուղատնտեսությունը ունեցել է մեծ կորուստներ՝ հողերի, անասնագլխաքանակի, գյուղտեխնիկայի, շարժական տնակների մասով: Անասնագլխաքանակի կորուստների համար ՀՀ կառավարության և մարզպետի կողմից տուժածներին տրվել է ֆինանսական աջակցություն:

Անհրաժեշտ ուշադրություն է դարձվել բնության և շրջակա միջավայրի պահպանությանը, ապահովվել համագործակցություն բնապահպանական խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

Աշխատանքներ են տարվել համայնքների ընդհանուր օգտագործման տարածքներում ապօրինի ծառահատումների, աղբակույտերի և արտադրական թափոնների տեղափոխման ուղղությամբ:

Տեղական ծրագրեր են մշակվել նաև գյուղական բնակավայրերում ծառատնկումների կազմակերպման, փողոցների մաքրման ուղղությամբ:

Ապահովվել է նաև համագործակցությունը բնական պաշարների և ընդերքօգտագործման բնագավառում: Տասներեք կազմակերպություն ունի մարզում ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության լիցենզիա:

ՀՀ-ում, ինչպես նաև մարզում տիրող ռազմական դրությամբ պայմանավորված տարվա ընթացքում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ, հարկ եղած դեպքում նաև վարչական ղեկավարների և բնակիչների հետ, անց են կացվել քննարկում-զրույցներ՝ ռազմական իրավիճակում արագ արձագանքման, անտառային

խախտումների նվազեցման, աղբահանության, ինչպես նաև հակահրդեհային կանոնների պահպանմանն ուղղված մի շարք միջոցառումներ:

Մարզում սիգ ձկնատեսակի փողոցային առևտուրը վերահսկելու և դադարեցնելու նպատակով ձևավորվել են աշխատանքային խմբեր և իրականացվել են ստուգայցեր:

Տարվա ընթացքում անտառտնտեսությունների միջոցով մի շարք բնակիչներ ապահովվել են թափուկ վառելափայտով:

❖ Հողօգտագործման բնագավառ

2022թ. գյուղատնտեսական արտադրության կազմակերպման նպատակով մարզի մոտ 44.0 հազ.հա վարելահողերից օգտագործվելէ 36.2 հազ. հա: Բարձրադիր և սահմանամերձ գոտիներում գտնվելու, մեծ թեքություններ ունենալու և տնտեսապես ոչ շահավետ լինելու պատճառներով համայնքներում չի օգտագործվել մոտ 7.8 հազ. հա վարելահող, այդ թվում՝ 4.2 հազ. հա պետական և համայնքային սեփականության:

Մարզի պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերից (անկախ հողամասերի նպատակային նշանակությունից) 2022թ. հողօգտագործողների կողմից օգտագործվել է (վարձակալություն, կառուցապատման իրավունք, սերվիտուտ և այլն) ավել քան 49.5 հազ. հեկտար՝ տարեկան շուրջ 630 մլն դրամ վճարով: 2022 թվականի հողօգտագործման դիմաց հաշվարկված վճարներից գանձումները կազմել են 95.1%:

2022թ. մարզի 5 համայնքներում տարբեր նպատակային նշանակության հողամասերից աճուրդ-վաճառքի ձևով օտարվել է 35.0 հա հողամաս: Հողերի օտարումից տեղական բյուջեներ է մուտքագրվել ավելի քան 115 մլն. դրամ, որը օտարված հողամասերի կադաստրային արժեքների հանրագումարը գերազանցում է ավելի քան 30.5%-ով:

2022թ. ընթացքում համայնքներում փոփոխվել է 42 միավոր, ավելի քան 60 հեկտար ընդհանուր մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունը՝ ինչը խթան կհանդիսանա մարզում սահմանային անվտանգության, ընդերքօգտագործման, այլընտրանքային էներգետիկայի, զբոսաշրջության, հասարակական սպասարկման և ենթակառուցվածքների զարգացման համար: Արդյունքում իրականացվել է ավելի քան 3.1 մլրդ. Դրամի կապիտալ ներդրումներ:

2022թ. հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխության արդյունքում՝ որպես կադաստրային արժեքների տարբերություն հաշվարկված գումարները համայնքների բյուջեներ են մուտքագրվել ամբողջությամբ:

❖ Առողջապահություն բնագավառ

Ոլորտում 2022թ. մարզպետի աշխատակազմի գործունեությունը հիմնականում ուղղված էր ապահովելու գործող առողջապահական հաստատությունների համաչափ զարգացումը, առողջության առաջնային պահպանման, մոր և մանկան առողջության, ծննդօգնության, շտապ օգնության և բուժականակաբարձական կետերում ցուցաբերվող բուժօգնության բարձր որակը ու մատչելիությունը: Առանձնակի ուշադրություն էր դարձվում պացիենտների անվտանգության ապահովման գործընթացի վրա, մասնավորապես ինտենսիվ աշխատանքներ են տարվել իմունոկանխարգելման, ինչպես նաև ներհիվանդանոցային վարակի կանխարգելման ուղղությամբ: Վերոգրյալ գործընթացը ավելի կարևորվել է 2020 թվականի մարտից սկսված ԿՈՎԻԴ-19

համավարակի պայմաններում: 2022 թվականին մարզում կատարվել է 5826 ՊՇՌ-թեստ, դրական արդյունք է արձանագրվել 2330 դեպքում: Հիվանդանոցային բուժօգնություն են ստացել 264 հիվանդներ, մահաբերությունը կազմել է 8%:

2022 թվականին շարունակվել է ԿՈՎԻԴ-ի դեմ պատվաստման գործընթացը, ինչը մարզային հանձնաժողովի կողմից ենթարկվում էր ամենօրյա մոնիտորինգի: 2022 թվականի դեկտեմբերի 29-ի դրությամբ ԿՈՎԻԴ-ի դեմ պատվաստման ընդգրկվացությունը 18-ից բարձր տարիքի կցագրված բնակչության շրջանում կազմել է շուրջ 51%:

2022 թվականին ծնելիությունը մարզում կազմել է 8. 7 պրոմիլե, մահացությունը՝ 8.1 պրոմիլե, մանկական մահացությունը՝4.2, պրոմիլե: Մարզի բնակչության բնական աճը կազմել է 0.6 պրոմիլե:

Մարզային ենթակայության ներքո գործում են 6 փակ բաժնետիրական ընկերություններ(5 բժշկական կենտրոններ և 1 նյարդահոգեբուժական դիսպանսեր):

2022 թվականին ավարտվեց <<Տաթևի առողջության կենտրոն>> և <<Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ-ի օպտիմալացման գործընթացը և 2022 թվականի նոյեմբերի 1-ից սկսեց գործել օպտիմալացման արդյունքում ստեղծված <<Տաթևի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ-ը: Այսպիսով, մարզում ձևավորվել և գործում են առողջության առաջնային պահպանման 9 գյուղական կենտրոններ:

10000 բնակչի հաշվով բուժսպասարկումն իրականացվել է 16. 3 բժշկի և 46.4 միջին բուժաշխատողի միջոցով: 2022 թվականին արտահիվանդանոցային այցելություններիի թիվը մեկ բնակչի հաշվով կազմել է 3. 0:

Ստացիոնար բժշկական հաստատություններում ծավալված էր ըստ առանձին մասնագիտությունների 370 մահճակալ: Մարզում հիվանդանոցային բուժօգնություն է ստացել 10082 մարդ: Շտապ օգնության ծառայության միջոցով իրականացվել է 18343 կանչ:

2022 թվականին կազմակերպվել է անվճար և արտոնյալ պայմաններով դեղամիջոցներ ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովման գործընթացը: ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել և բաշխվել է կենտրոնացված գնումներով ձեռք բերված 85.6 մլն դրամի, իսկ մարդասիրական օգնության ճանապարհով՝ 19.6 մլն դրամի դեղորայք, բժշկական պարագաներ: Բժշկական կազմակերպությունների միջոցով բնակչությանը անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվել է 38. 8 մլն. դրամի դեղամիջոց:

2022 թվականին առողջապահական ընկերությունների նյութատեխնիկական բազայի հագեցման և կադրերով համալրման գործընթացները կրել են շարունակական բնույթ, իրականացվել են միջոցառումներ՝ ֆինանսական հոսքերի արդյունավետ կառավարման ուղղությամբ:

2022 թվականին խիստ կարևորվել է բուժաշխատողների մասնագիտական հավաստագրման գործընթացը, որը պետք է ավարտվեր 2022 թվականի դեկտեմբերի 31-ին: Մարզի բժշկական ավագ(բժիշկներ) մասնագետների 100% և միջին բուժաշխատողների՝ 90% ներկայացվել են հավաստագրման:

2022 թվականի ֆինանսական մուտքերը կազմել են՝ պետական պատվերի կատարողականի դիմաց ՝ 2. 7 մլրդ. դրամ, իսկ արտաբյուջետային՝ 660. 1 մլն. դրամ: ՊԱԳ-ի կողմից կատարողականը փոխհատուցվել է 99,9%: Բուժ հաստատությունները 2022 թվականի աշխատավարձի գծով կրեդիտորական պարտքեր չեն ունեցել:

Համակարգի չլուծված հիմնախնդիրներ են շարունակում մնալ՝
-Կապանի և Գորիսի բժշկական կենտրոնների պոլիկլինիկական մասնաշենքերի հիմնանորոգումը
- Անգեղեկոթի բժշկական ամբուլատորիայի ջեռուցման ապահովումը
-Մեղրիի, Քաջարանի, Սիսիանի, Կապանի բժշկական կենտրոնների և նյարդահոգեբուժական դիսպանսերի համալրումը անհրաժեշտ բժշկական կադրերով
- Մեղրի, Քաջարան և Կապան համայնքներում դիահերձարանների կառուցումը
- Խնձորեսկի, Անգեղակոթի և Շինուհայրի ԱԱՊԿ-ի համար նոր շենքերի կառուցումը
- Սահմանամերձ գյուղերի ԲՄԿ-շենքային պայմանների և հագեցվածության բարելավումը
- Մարզում վերականգնողական կենտրոնի ստեղծումը:

❖ Սոցիալական բնագավառ

«Հայաստանի Հանրապետության 2022թ. պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանին բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված 30.000.000 դրամն ամբողջությամբ ուղղվել է սոցիալապես անապահով քաղաքացիներին օգնություն հատկացնելուն:

Հաշվետու ժամանակահատվածում դրամական օգնություն ստանալու նպատակով մարզպետին է դիմել 1211 քաղաքացի: Դիմումները սահմանված կարգով ուսումնասիրվել են համապատասխան հանձնաժողովում, որի դրական եզրակացությամբ ընթացք է տրվել 661 դիմումների և հատկացվել 20.000-ից 100.000-ական դրամ օգնություն:

ՀՀ պաշտպանության նախարարությունից ստացվել են սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու տեղեկանքները և հատկացվել զոհված զինծառայողների ընտանիքների անդամներին և զինհաշմանդամներին:

Հաշվետու ժամանակահատվածում պարբերաբար կատարվել է քաղաքացիների ընդունելություն: Կազմակերպվել է 11 ընդունելություն:

Հավաքագրվել և ՀՀ միգրացիոն ծառայություն է ներկայացվել 1988-1992 թթ ժամանակահատվածում Ադրբեջանի Հանրապետությունից արտագաղթած և Սյունիքի մարզում ժամանակավոր կացարաններում բնակվող հինգ ընտանիքների փասաթղթերը՝ բնակարանի գնման վկայագիր ստանալու նպատակով:

2022 թվականի սեպտեմբերի 13-14-ին Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմական գործողություններից տուժած 4 քաղաքացիների տրվել է 2 մլն դրամական աջակցություն՝ 1 մլն դրամ վնասված ավտոմեքենայի վերականգնման, 1 մլն դրամ՝ երեք վիրավոր զինծառայողներին առողջական վերականգնման նպատակով:

❖ **Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառ**

Համակարգված աշխատանքներ է իրականացվել ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված պետական նպատակային ծրագրերի կատարման ապահովման ուղղությամբ:

Մարզում հաշվառվել է առանց ծնողական խնամքի մնացած 4 երեխա:Որպես խնամատար ծնող դառնալ ցանկացող անձ հաշվառվել են 2-ը, 8 խնամատար ծնողների

հետ կնքվել են պայմանագրեր, որոնց ընտանիքներում խնամվում են 16 երեխա: Որպես երեխա որդեգրել ցանկացող անձ հաշվառվել են 14 թեկնածու. 4 թեկնածու ունեն ընտրված երեխաներ, 2-ը՝ դատարանով իրականացրել են որդեգրումը, 2-ը՝ գործընթացի մեջ է: Որպես որդեգրման ենթակա երեխա հաշվառվել է 2-ը: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 167 երեխայի տրվել են վկայագրեր:

Մարզում մուրացիկ և թափառաշրջիկ երեխաներ հաշվառված չեն: Ոստիկանության կողմից պրոֆիլակտիկ հաշվառման են վերցվել 21 իրավախախտ, հաշվառումից հանվել՝ 15-ը: Երեխաների իրավունքների պաշտպանության կառույցների համագործակցության արդյունքում մարզից 4 երեխա ուղղորդվել են «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ:

Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող 303 երեխաների տվյալներ մուտքագրվել է Նորք տեղեկատվավերլուծական կենտրոնի «Մանուկ» բազա: Հայ օգնության ֆոնդի «Հայաստանի երեխաների աջակցության» հովանավորչական ծրագրում ընդգրկված միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ 285 երեխա ստացել են ֆինանսական աջակցություն: 44-օրյա պատերազմում զոհված զինծառայողների 157 երեխաներ ընդգրկվել են ՀՕՖ-ի «Զոհված զինծառայողների երեխաների աջակցության» ծրագրում և ստացել ֆինանսական աջակցություն: Միակողմանի ծնողազուրկ և զոհված զինծառայողների 40 երեխաներ իրենց ամառային հանգիստն են անցկացրել Հանքավանի «Արագած» ճամբարում:

Բերձորի միջանցքի փակման հետևանքով իրականացվել է Գորիսի հյուրանոցներում ժամանակավորապես բնակություն հաստատած արցախցիների կարիքի գնահատում և համապատասխան իրերով ապահովում:

❖ Կրթության, մշակույթի և սպորտի բնագավառ.

Մարզում գործում է 117 հանրակրթական ուսումնական հաստատություն՝ 75 միջնակարգ, 5 ավագ, 34 հիմնական, 2 տարրական, 1 հատուկ դպրոց: Հանրակրթական ուսումնական հաստատություններից 6-ը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության են, իսկ 111-ը՝մարզային, որոնցից 31-ը քաղաքային են, 86-ը՝ գյուղական:Մինչև 10 աշակերտ ունեցող դպրոցների թիվը՝ 18: Առաջին դասարանցի չեն ունեցել 10 դպրոց:

2022 թվականի սեպտեմբերի 15-ի դրությամբ.

- Մարզի աշակերտների թիվը՝ 1 7537, Առաջին դասարանցիների թիվը՝ 1650:
- Մարզային ենթակայության 111 հանրակրթական ուսումնական հաստատություններում կոմպլեկտավորվել է 1088 դասարան՝ 15363 աշակերտով, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 323 աշակերտ՝ 72 դպրոցից:

Ուսուցման հեռավար կազմակերպման թույլտվություն տրվել է անհատական 9 սովորողի և 2 դասարանի սովորողի:

Մարզում հաշվառված նախադպրոցական տարիքի 4290 երեխա ընդգրկվել են մարզի համայնքային ենթակայության թվով 46 նախադպրոցական ուսումնական հաստատություններում:

2021-2022 ուսումնական տարում միջնակարգ կրթության շրջանավարտների թիվը կազմել է 1085 աշակերտ:

2022թ. Սյունիքի մարզից ՀՀ բուհերի ընդունելության մրցույթի հիմնական փուլին մասնակցելու հայտ է ներկայացրել 722 դիմորդ, որոնցից ընդունվել է 601-ը (83.2%), որից 108-ը՝ անվճար:

Մարզի դպրոցների 15 աշակերտ արժանացել է Գերազանցության մեդալի:

2021-2022 ուսումնական տարվա առարկայական օլիմպիադաների մարզային փուլին մասնակցել է 785 աշակերտ, մրցանակակիր՝ 329 աշակերտ, որից 120-ը մանակցել են հանրապետական փուլին: Հանրապետական փուլի մասնակից աշակերտները գրավել են 48 մրցանակային տեղ, որից 17-ը ՀՀ ԿԳՄՍ նախարարությունից կստանա ամսական անվանական կրթաթոշակ: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայից անհատական մրցապայքարում 2 աշակերտ արժանացել է ոսկե մեդալի:

Ուսումնական հաստատություններին բաշխվել է գերազանց առաջադիմության 2500 գովասանագիր:

ՀՀ առողջապահության նախարարին ներկայացվել է նպատակային ուղեգիր տրամադրելու 2 միջնորդագիր՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի «Բուժական գործ» մասնագիտության 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ բակալավրի ընդունելության քննությունների նպատակային ուսուցման տեղերի մրցույթին մասնակցելու համար:

Մարզի հանրակրթական դպրոցներում առկա ուսուցչի թափուր տեղերը համալրելու համար դպրոցներում պարբերաբար հայտարարվում են մրցույթներ: Ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագետ չլինելու դեպքում թափուր ժամերը ժամանակավոր դասավանդվում են «Մենթոր դպրոցներ»-ի ուսուցիչների կամ «Դասավանդի՛ր, Հայաստան» հիմնադրամի կողմից գործուղված ուսուցիչների կողմից:

2022 թվականին Սյունիքի մարզպետարանի ենթակայության 22 հանրակրթական ուսումնական հաստատություններում կայացել է հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար մրցույթ, իսկ 11 ուսումնական հաստատությունում հայտարաված մրցույթը կկայանա 2023 թվականին՝ համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն կարգի:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022 թվականի նոյեմբերի 29-ի N 1573-Ա հրամանով ստեղծված՝ ՀՀ Սյունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման հանձնաժողովը իրականացրել է Սյունիքի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման գործընթացը, որի արդյունքում ատեստավորվել են 488 ուսուցիչ:

Հանրակրթական ուսումնական հաստատություններից սեփական նախաձեռնությամբ (կամավոր) ատեստավորման արդյունքում ատեստավորվել են 48 ուսուցիչ:

Մարզպետարանի ենթակայության ուսումնական հաստատություններից 5 ուսուցչի շնորհվել է որակավորման առաջին աստիճանի տարակարգ:

45 դպրոցում գործում են ռոբոտաշինության լաբորատորիաներ: Տվյալ դպրոցների սովորողների մի մասը իրենց մասնակցությունն են ունեցել Արմատ ճամբարին:

Մարզից ՀՀ Կոտայքի մարզի «Լուսաբաց» ճամբար են մեկնել 140 աշակերտ՝ 2 հերթափոխով, մարզի զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և

աշխարհազորայինների, ծնողազուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաներ:

«Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակներում 111 ուսումնական հաստատություններից 81-ում տարրական դասարանների աշակերտներին տրամադրվում է տաք սնունդ, 30-ում՝ չոր:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններին բաշխվել է 37 անուն 39651 կտոր անվճար և 201 անուն 151440 կտոր վճարովի դասագիրք:

«Լուսապսակ» և «Ոսկի Խատուտիկ» ՍՊԸ-ների կողմից ստացել ենք 4 անուն 2048 կտոր անվճար ամսագիր, որոնք բաշխվել են մարզի հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատություններին:

Մարզում մշակույթի դերը բարձրացնելու ու ազգային մշակութային արժեքներն պահպանելու ուղղությամբ իրականացվել են մի շարք ծրագրեր, ինչպես նաև սպորտային բազմաբնույթ միջոցառումներ առողջ ապրելակերպի արմատավորման, մասսայականացման, ֆիզկուլտուրայի և սպորտի քարոզչության ապահովման նպատակով:

ԿԳՄՍ նախարարության կողմից ներկայացված «Բաժանորդային համակարգի ներդրման» դպրոցական աբոնեմենտային ծրագրից օգտվել են 491 աշակերտ: «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ում ներկայացվել է 10 բեմականացում, որից 4-ը եղել է առաջնախաղ, տարվա ընթացքում բեմադրվել է 48 ներկայացում՝ ավելի քան 4000 հանդիսատեսի մասնակցությամբ:

Թատրոնի միջազգային օրվա առիթով «Կապանի Ա. Շիրվանզադեի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ը մասնակցեց Երևանում կայացած «Արտավազդ» ամենամյա մրցանակաբաշխությանը և արժանացավ «Հատուկ մրցանակի»:

Մարզի պատվիրակությունները մասնակցել են հանրապետական 4 փառատոնների՝ ներյայացել տաղավարներով՝ ցուցադրել համայնքներին բնորոշ արվեստն ու արհեստը:

Մարզի երաժշտական, արվեստի ու գեղարվեստի դպրոցներում սովորում են 2465 սան: Մարզը մասնակցել է Երևանի և ՀՀ մարզերի երաժշտական և արվեստի դպրոցների փոխգործակցության «Քույր-դպրոցներ» ծրագրին: Մարզպետարանի աջակցությամբ մարզի 30 երիտասարդներ մասնակցել են Երևանում կազմակերպված «Հզոր համայնք» միջոցառմանը:

Մարզում գործում է 8 մանկապատանեկան մարզադպրոց, որտեղ հաճախում են 2125 սան:

Անց են կացվել «ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-3 և 4-7 դասարանների աշակերտների միջև սպորտլանդիա» մարզական միջոցառման, «ՀՀ մարզերի, Երևան քաղաքի և ԱՀ հանրակրթական դպրոցների 7-12-րդ դասարանների միջև կազմակերպվող սպարտակիադա» մարզական միջոցառումների համայնքային և մարզային փուլերը, հանրապետական փուլում մարզը ներկայացնող թիմերը գրավել են պատվավոր տեղեր:

Ազգային ժողովի գավաթի խաղարկության հանրապետական փուլում մարզի հավաքական թիմը գրավել է պատվավոր առաջին տեղը:

Մարզում կազմակերպվել է «ՀՀ վարչապետի գավաթ» սիրողական սեղանի թենիսի մրցաշարի համայնքային և մարզային փուլերը, մարզային փուլում հաղթող ճանաչված թենիսիստները մասնակցել են հանրապետական փուլին, նրանցից չորսը արժանացել են դրամական պարգևների:

Մարզի ներկայացուցիչները մասնակցել են ‹‹ՀՀ վարչապետի գավաթ›› խճուղային կրոսավազքի, հեծանվավազքի սիրողական մրցաշարերին և գրավել մրցանակային տեղեր:

«ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազքի հանրապետական փուլում մարզային փուլում հաղթող ճանաչված Կապանի թիվ 9 ավագ դպրոցի թիմը գրավել է առաջին տեղը:

Մարզպետարանի աջակցությամբ Սյունիքի մարզի ‹‹Հաշմանդամների աջակցության Ողջի›› հ/կ-ն և ‹‹Հաշմանդամ անձանց սեղանի թենիսի հայկական ֆեդերացիա›› հ/կ-ն Կապանում անց են կացրել սեղանի թենիսի բաց առաջնություն՝ նվիրված 44-օրյա պատերազմում զոհված հերոսներին:

Դպրոցականների ոչ պրոֆեսիոնալ ֆուտբոլային թիմերի մասնակցությամբ կազմակերպվել է Ռ. Բերեզովսկու անվան ֆուտբոլային մրցաշար:

2022 թվականին սկսվել է ‹‹Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց›› ՊՈԱԿ-ի մասնաշենքի կապիտալ վերանորոգումը:

❖ Առևտրի, հասարակական սննդի և սպասարկման բնագավառ

2022 թվականին մարզի սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառությունը նախնական տվյալներով՝ ընթացիկ գներով, կազմել է մոտ 30.257 մլրդ դրամ, ընդ որում առևտրաշրջանառության ավելի քան 61 %-ը կամ 18,4 մլրդ դրամը ձևավորվել է խանութների և կրպակների միջոցով:

2022 թվականի առաջին կիսամյակի հաշվետվությունների ամփոփ տվյալներով, մանրածախ առևտրով զբաղվող օբյեկտների թիվը մարզում կազմել են 1148 միավոր, հանրային սննդի օբյեկտների թիվը՝ 183, կենցաղային ծառայությունների օբյեկտների թիվը՝ 279:

Բնակչության մեկ շնչի հաշվով մանրածախ առևտրի շրջանառությունը նախնական տվյալներով կազմում է մոտ 224.6 հազ. դրամ:

Մարզում մատուցված վճարովի ծառայությունների ծավալը նախնական տվյալներով 2022 թվականին՝ ընթացիկ գներով, կազմել է շուրջ 38.2 մլրդ դրամ:

Բնակչության մեկ շնչի հաշվով վճարովի ծառայությունների ծավալը կազմել է մոտ 284.1 հազ. դրամ:

Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը 2022թ. մարզի կազմակերպություններում կազմել է 276,6 հազ դրամ, որը բարձր է հանրապետության համապատասխան ցուցանիշից (238,7 հազ դրամ) մոտ 15,9%-ով, ինչը պայմանավորված է հանքագործական արդյունաբերության ոլորտում բարձր աշխատավարձերի մակարդակով:

2021 թվականին մարզում տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է 72,8 %, գործազրկության մակարդակը կազմում է 9.8%, զբաղվածության մակարդակը կազմել է մոտ 65.7%:

❖ Արտաքին կապեր.

2022 թվականի ընթացքում շարունակվել են աշխատանքները գործընկեր կառույցների հետ, ինչպես նաև մշակվել և գործարկվել է արտաքին կապերի ընդլայնմանն ու զարգացմանն ուղղված միջոցառումների նոր մոդել:

2022 թվականի ընթացքում Սյունիքի մարզպետն ընդունել է մի շարք դեսպանատներից և միջազգային կառույցների գրասենյակներից ներկայացուցիչներ, մասնավորապես՝ Հայաստանում Ավստրական զարգացման գործակալության, Վորլդ Վիժն–Հայաստանի, Հայկական կարմիր խաչի ընկերության, Եվրամիության պատվիրակության, Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, «Առողջություն Հայաստանի», Ռազմավարական զարգացման գործակալության, Հայաստանում շվեյցարական համագործակցության գրասենյակի տարածաշրջանային գրասենյակի, ՄԱԿ-ի՝ Պարենի և գյուղատնտեսության, Զարգացման ծրագրերի, Բնակչության հիմնադրամի, Փախստականների գործերով գլխավոր հանձնակատարի, ՅՈՒՆԻՍԵՖ-ի և Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակների, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության ներկայացուցիչներին:

Նշենք որ վերոնշյալ կառույցների այցերի հիմնական նպատակը եղել է Սյունիքում տեղում հետպատերազմյան վիճակին ծանոթանալը, աջակցության պատրաստակամություն հայտնելը և առկա կարիքներին ծանոթանալը:

Հարկ է նաև նշել, որ այցերից հետո ստացվել են ներկայացված կարիքներին համապատասխան աջակցություններ նշված կառույցներից որոշների կողմից:

2022 թ. մայիսին Կապան քաղաքում Սյունիքի մարզպետարանի նախաձեռնությամբ և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ կազմակերպվել է «Միջտարածաշրջանային առևտրատնտեսական համագործակցության զարգացումը Եվրասիական տնտեսական միությունում» ԵԱՏՄ ամենամյա աշխատաժողովը:

Կապված մարզում միջազգային կառույցների կողմից իրականացվող բազմաթիվ ու տարաբնույթ ծրագրերի հետ կարիք է առաջացել այդ բոլոր աշխատանքներում համակարգման ֆունկցիայի՝ աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, վերջինս Սյունիքի մարզպետարանը վերցրել է իր վրա, մշակելով և առաջարկելով աշխատանքի նոր մոդել: 2022 թ. նոյեմբերին մարզպետարանի նախաձեռնությամբ և իրականացմամբ կայացել է «Միասին Սյունիքի համար» աշխատաժողովը, որը մի տեղում է հավաքել մարզի հետ առնչվող բոլոր միջազգային կառույցների ներկայացուցիչներին՝ նպատակ հետապնդելով բարձրացնել փոխադարձ համագործակցության արդյունավետությունը:

Համաձայն աշխատաժողովի արդյունքում ձեռք բերված պայմանավորվածության հետագա բոլոր ծրագրերը պետք է համակարգվեն Սյունիքի մարզպետարանի կողմից, ի պատասխան՝ մասնակից կառույցները հնարավորություն են ստացել իրականացվող և պլանավորվող ծրագրերի մասով համագործակցել Սյունիքի մարզպետարանի հետ՝ կապված իրական կարիքների սահմանման և առաջնահերթությունների, ոլորտային ուղղորդման, որոշ տվյալների հավաստիության և նմանատիպ այլ համագործակցության հետ:

Աշխատաժողովի արդյունքներից է նաև պայմանավորվածությունն ու աշխատանքները միասնական էլեկտրոնային հարթակի շուրջ, որը պետք է ծառայի որպես բազա և որպես համակարգման աշխատանքների ուղղությամբ ստացված արդյունք, հետևաբար այն պետք է հեշտացնի և արդյունավետորեն համակարգի ոլորտը: Տվյալ պահին այդ հարթակի շուրջ նախապատրաստական/ադապտացիոն աշխատանքներ են տարվում:

2022թ. հոկտեմբերի 21-ին Կապանում բացվեց Իրանի Իսլամական Հանրապետության հյուպատոսարանը, որը թե հանրապետության, և թե մարզի համար անչափ կարևոր իրադարձություն էր, որին մասնակցում էին Հայաստանի և Իրանի արտգործնախարարներ Արարատ Միրզոյանը և Հոսեյն Ամիր Աբդոլլահիանը:

2022 թվականի հոկտեմբերին հայ-ֆրանսիական միջտարածաշրջանային ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Սյունիքի մարզպետ Ռոբերտ Ղուկասյանը Ֆրանսիա կատարած աշխատանքային այցի շրջանակներում ստորագրել է Օվերն Ռոն-Ալպ շրջանի հետ համագործակցության համաձայնագիր, որով 300 հազար եվրո աջակցություն է տրամադրվել Սյունիքի մարզին, որը կուղղվի մարզի զարգացմանը, և մասնավորապես, Ադրբեջանի կողմից սեպտեմբերի 13-ի ռազմական գործողությունների արդյունքում առաջացած հիմնախնդիրների լուծմանը:

Ֆրանսիայի հետ համագործակցությանը նոր շունչ հաղորդեց ֆրանսիական կողմից ստացված ֆինանսավորման գործիքների մասին տեղեկատվությունը, որի հետ կապված մարզպետարանի կողմից մարզի համայնքներին փորձագիտական աջակցություն է տրամադրվել և տարվա ավարտին մարզի բոլոր համայնքները արդեն գրանցված են եղել էլեկտրոնային հարթակում և կարող են դիտարկվել որպես գործընկեր Ֆրանսիայի համայնքների կողմից, ներկայացնել ծրագրեր՝ համատեղ իրականացման նպատակով:

❖ Մարզպետի գործունեության լուսաբանում

Մարզպետարանի գործունեությունը լուսաբանվել է մարզպետարանի պաշտոնական http://syunik.mtad.am/ կայքում, մարզպետարանի ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև տեղեկատվական նյութեր են տարածվել մարզային ու հանրապետական լրատվամիջոցներով:

Մարզպետարանի կայքում տեղադրվել են նաև պարտադիր հրապարակման ենթակա փաստաթղթերը, տեղեկատվական նյութերը, հայտարարությունները, Սյունիքի մարզպետի և առանձին ստորաբաժանումների տարեկան և ընթացիկ հաշվետվությունները, 2022 թվականին մարզպետի կողմից ընդունված որոշումները, քաղաքացիների ընդունելության արդյունքները, դիմումների, բողոքների վերլուծությունները:

2022թ. մարզպետին ուղղվել է տեղեկատվություն ստանալու 118 գրավոր հարցում, որոնց սահմանված կարգով և ժամկետներում պատասխան է տրվել:

Հաշվետու ժամանակահատվածում մարզպետը հարցազրույցներ է տվել տեղական և հանրապետական լրատվամիջոցներին, ԶԼՄ-ների համար կազմակերպվել է նաև մարզպետի 2 մամուլի ասուլիս: